ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 16 >> ապրիլի 2013թ. N 25

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2013 թվականի ապրիլի 12-ի N162-Ա որոշումը, <<Բամբակաշատի միջնակարգ դպրոց>>պետական ոչ առևտրային կազմակերպությունում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ՝

1.Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին (Ա. Թովմասյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Բամբակաշատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Գ. Ղարիբյանին (համաձայնությամբ):

3.Հանձնաժողովին (Ա. Թովմասյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել եռօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչությանը /Վ. Մկրտչյան/՝ սահմանված կարգով վճարել գործուղման ծախսերը:

5.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզպետի 2013 թվականի մարտի <<16>>-ի

N25 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Թովմասյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության **բաժնի պետ:**

Անդամներ՝

Վ. Սուքիասյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ:

Ա. Վասիլյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալտնտեսական զարգացման վարչության ֆինանսա-տնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ:

Հանձնող՝

Պ. Ղամբարյան << Բամբակաշատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն տնօրենի պաշտոնակատար:

Ընդունող՝

Գ. Պարոնյան << Բամբակաշատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն տնօրեն

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ